ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2024 թվականի N 41-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 274-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի N 1307-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 274-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) նախաբանում «52-րդ հոդվածի 2-րդ» բառերը փոխարինել «52-րդ հոդվածի 4-րդ» բառերով:

2. Որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 8-րդ կետում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե)» բառերը փոխարինել «կոմիտեն» բառով.

2) 9.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել.

3) 9.2-րդ կետում «որակի հսկողության մասնագետներն» բառերը փոխարինել «գլխավոր մասնագետ-տեսուչներն» բառերով.

4) 9.3-րդ կետի 3-րդ ենթակետում «ղեկավարին» բառը փոխարինել «նախագահին» բառով.

5) 38-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«38. Կոմիտեի ավիացիոն անվտանգության ստորաբաժանման կողմից անցկացված ավիացիոն անվտանգության որակի հսկողության միջոցառումների վերաբերյալ տարեկան հաշվետվություն է ներկայացվում կոմիտեի նախագահին, որը պետք է պարունակի տեղեկություններ՝».

6) 38.1-ին կետում «Ավիացիոն անվտանգության միջգերատեսչական հանձնաժողովին» բառերը փոխարինել «Կոմիտեի նախագահին» բառերով.

7) 40-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«40. Սույն կարգի 37-րդ կետով նախատեսված միջոցառման հաշվետվությունը կոմիտեի ավիացիոն անվտանգության ստորաբաժանման կողմից կազմվում և ներկայացվում է կոմիտեի նախագահին՝ ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Կոմիտեի նախագահի մոտ միջոցառման հաշվետվությունը քննարկվում է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո այն համապատասխան գրությամբ ուղարկվում է կազմակերպությանը:».

8) 40-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 40.1-ին և 40.2-րդ կետերով՝

«40.1. Կազմակերպությունը, ստանալով միջոցառման հաշվետվությունը, ուսումնասիրում է այն և թերությունների վերաբերյալ իր դիրքորոշումներն ու պարզաբանումները ներկայացնում է կոմիտե՝ հաշվետվությունն ստանալու օրվանից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո կոմիտեի ավիացիոն անվտանգության ստորաբաժանման կողմից արդյունքներն ամփոփվում են, և 5

(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ամփոփված հաշվետվությունը ներկայացվում է կոմիտեի նախագահին:

40.2. Կոմիտեի նախագահի մոտ սույն որոշման 40.1-ին կետում ներկայացված հաշվետվությունը քննարկվում է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո քննարկման արդյունքների մասին եզրակացությունը համապատասխան գրությամբ ուղարկվում է կազմակերպությանը՝ թերությունների կամ անհամապատասխանությունների վերացման պլան-ժամանակացույցի կազմման և կոմիտե ներկայացման համար: Եզրակացության հիման վրա կազմակերպության կողմից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է թերությունների կամ անհամապատասխանությունների վերացման պլան-ժամանակացույց և ներկայացվում է կոմիտե:».

9) ամբողջ տեքստում «տեսուչ» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «գլխավոր մասնագետ-տեսուչ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

10) որոշման հավելվածով սահմանված N 1 ձևում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի կոմիտե» բառերը փոխարինել «Քաղաքացիական ավիացիայի կոմիտե» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի կոմիտեի պետի» բառերը՝ «Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ